ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» « » 2025 թվականի
N « - Ն »

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 15-րդ մասը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը **որոշում է.**

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձեվանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» N 03-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված N 1 հավելվածով սահմանված տարեկան հայտարարագրի ձևանմուշը լրացնել հետևյալ վերնագրով նոր բաժինով և նոր ենթաբաժիններով.

«**Բ.4.1 ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐ**

Բ. 4.1.1. Կրիպտոակտիվներ

Սեփական-նատիրոջ	Ամսաթիվ	Անվանումը	Ձեռք բերելու	Ձեռք բերելու	Ձեռք բերել գինը

անունը, ազգանունը, հայրանունը	**(տվյալ տարվա հունվարի 1 կամ դեկտեմբերի 31)**		**օրը, ամիսը, տարին**	**եղանակը**	**(արժեքը) և արժույթը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.					
2.					

Բ. 4.1.2. Հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձի
կրիպտոակտիվ կամ կրիպտոակտիվ, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօ

Սեփակա-նատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը	**Ամսաթիվ (տվյալ տարվա հունվարի 1 կամ դեկտեմբերի 31)**	**Անվանումը**	**Ձեռք բերելու օրը, ամիսը, տարին**	**Ձեռք բերելու եղանակը**	**Ձեռք բերել գինը (արժեքը) և արժույթը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.					
2.					

»:

2. Որոշմամբ սահմանված Հավելված N 1-ը «Բ. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒԻ ԳՈՒՅՔԸ» բառերից հետո լրացնել «, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ՝ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ» բառերով:

3. Որոշմամբ սահմանված N 1 հավելվածով սահմանված տարեկան հայտարարագրի ձևանմուշի «Բ.5. ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻՑ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻՑ ԱՎԵԼԻ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔ (ԹԱՆԿԱՐԺԵՔ ԳՈՒՅՔ)» բաժնում «չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույք» բառերը փոխարինել «չորս միլիոն ՀՀ դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունեցող գույք» բառերով:

4. Որոշմամբ սահմանված N 1 հավելվածով սահմանված տարեկան հայտարարագրի ձևանմուշի «Բ.6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ» բաժնից, այդ թվում վերնագրերից, հանել «և կրիպտոարժույթ», ինչպես նաև «և կրիպտոարժույթի» բառերը:

5. Որոշմամբ սահմանված N 2 հավելվածով սահմանված պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրեի ձևանմուշները լրացնել հետևյալ վերնագրով նոր բաժինով և նոր ենթաբաժիններով.

«**Բ.4.1 ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐ**

Բ. 4.1.1. Կրիպտոակտիվներ

	Սեփակա-նատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը	Անվանումը	Ձեռք բերելու օրը, ամիսը, տարին	Ձեռք բերելու եղանակը	Ձեռք բերելու գինը (արժեքը) և արժույթը	Գործարքի մյ անվանումը կ ազգանունը, հայրանունը,
	1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.						
2.						

Բ. 4.1.2. Հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձի պատկանող կրիպտոակտիվ կամ կրիպտոակտիվ, որից փաստացի օգուտ է ստանում

	Սեփակա-նատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը	Անվանումը	Ձեռք բերելու օրը, ամիսը, տարին	Ձեռք բերելու եղանակը	Ձեռք բերելու գինը (արժեքը) և արժույթը	Կրիպտոակտի սեփականատի անվանումը կ ազգանունը, հայրանունը,
	1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.						
2.						

»:

6. Որոշմամբ սահմանված Հավելված N 2-ը «Բ. ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒԻ ԳՈՒՅՔԸ» բառերից հետո լրացնել «, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ՝ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ» բառերով:

7. Որոշմամբ սահմանված N 2 հավելվածով սահմանված տարեկան հայտարարագրի ձևանմուշի «Բ.5. ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻՑ ԿԱՄ ԴՐԱՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻՑ ԱՎԵԼԻ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔ (ԹԱՆԿԱՐԺԵՔ ԳՈՒՅՔ)» բաժում «չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույք» բառերը փոխարինել «չորս միլիոն ՀՀ դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունեցող գույք» բառերով:

8. Որոշմամբ սահմանված N 2 հավելվածով սահմանված պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրերի ձևանմուշների «Բ.6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ» բաժնից, այդ թվում վերնագրերից, հանել «և կրիպտոարժույթ», «և կրիպտոարժույթի», ինչպես նաև «կամ կրիպտոարժույթի» բառերը:

9. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 1-ին կետի 17-րդ ենթակետերի «չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույք» բառերը փոխարինել «չորս միլիոն ՀՀ դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունեցող գույք» բառերով:

10. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 1-ին կետի 21-րդ ենթակետերից

հանել «և կրիպտոարժույթ» բառերը:

11. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով և պարբերություններով.

«21.1) հայտարարատու պաշտոնատար անձի կրիպտոակտիվները՝

ա. սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը.

բ. ամսաթիվը (տվյալ տարվա հունվարի 1 կամ դեկտեմբերի 31),

գ. անվանումը,

դ. ձեռք բերելու օրը, ամիսը, տարին,

ե. ձեռք բերելու եղանակը,

զ. ձեռք բերելու գինը (արժեքը) և արժույթը,

է. գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

ը. գործարքը կրիպտոակտիվների առևտրային հարթակում կնքված լինելու դեպքում՝ հարթակի օպերատորի անվանումը.»:

12. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով և պարբերություններով.

«21.2) Հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող կրիպտոակտիվ կամ կրիպտոակտիվ, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն՝

ա. սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը.

բ. ամսաթիվը (տվյալ տարվա հունվարի 1 կամ դեկտեմբերի 31),

գ. անվանումը,

դ. ձեռք բերելու օրը, ամիսը, տարին,

ե. ձեռք բերելու եղանակը,

զ. ձեռք բերելու գինը (արժեքը) և արժույթը,

է. գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

ը. հայտարարատուի և կրիպոակտիվի սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը.»:

13. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 1-ին կետի 24-րդ ենթակետում «:»

կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:

14. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով և պարբերությունով.

«24.1) հայտարարատու պաշտոնատար անձի՝

ա. լրացուցիչ հրապարակային տեղեկություններ։»:

15. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 2-րդ կետի 15-րդ ենթակետերի «չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույք» բառերը փոխարինել «չորս միլիոն ՀՀ դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունեցող գույք» բառերով:

16. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 2-րդ կետի 18-րդ ենթակետերից հանել «և կրիպտոարժույթ», ինչպես նաև «կամ կրիպտոարժույթի» բառերը:

17. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով և պարբերություններով.

«18.1) հայտարարատու պաշտոնատար անձի կրիպտոակտիվները՝

ա. սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը.

բ. անվանումը,

գ. ձեռք բերելու օրը, ամիսը, տարին,

դ. ձեռք բերելու եղանակը,

ե. ձեռք բերելու գինը (արժեքը) և արժույթը,

զ. գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

է. գործարքը կրիպտոակտիվների առևտրային հարթակում կնքված լինելու դեպքում՝ հարթակի օպերատորի անվանումը.»:

18. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով և պարբերություններով.

«18.2) Հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող կրիպտոակտիվ կամ կրիպտոակտիվ, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն՝

ա. սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը.

բ. անվանումը,

գ. ձեռք բերելու օրը, ամիսը, տարին,

դ. ձեռք բերելու եղանակը,

ե. ձեռք բերելու գինը (արժեքը) և արժույթը,

զ. գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը,

 է. հայտարարատուի և կրիպոակտիվի սեփականատիրոջ միջև առկա կապի բնույթը.»:

19. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 2-րդ կետի 21-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:

20. Որոշմամբ սահմանված Հավելված N 3-ի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով և պարբերությունով.

«21.1) հայտարարատու պաշտոնատար անձի՝

ա. լրացուցիչ հրապարակային տեղեկություններ։»: